

դաւաճողին խաղնէն ելած. մինն թաղաւոր կո-  
 չէր, միւսն՝ թաղուհի, որն՝ արծիւ, օձ, վի-  
 շապ եւ այլն, յոյժ մեծ եւ երկայն. եւ պղինձն 60  
 աղնիւ որպէս ոսկի եւ ոսկոյն պարասպար, զոր  
 այլ տեղ կարծեմ թէ ոչ գտանի. մէկին ԲՃ  
 եզն լծեցին՝ հաղիւ կարացին շարժել. եւ այլ  
 բազում զէնք, զբահր, ճէպայք, ալիւր, եղ,  
 չոր միս եւ այլն. նաեւ նոցա արծթի փարայք<sup>1</sup> 65  
 գտին. եւ այնու վճարեցին իւրեանց զօրաց :  
 Եւ առեալ զկապուտնի եւ զաւարն՝ ուխտ ու  
 դաշինք արարին. բայց թաղաւորն Մօսքովայ  
 կարեց զգլուխն Շահինին, թէ է՞ր դաշնադէր  
 եղեր. ապա ահամայ արար երդումն. եւ մեծ 70  
 պարգեւք ետ արքային, այլ եւ ժե քաղաք եւ  
 ամ յամէ հարկս տալ յանձն առ ԽՈՒ ոսկի. զի  
 վախաց Լէհու զօրացն :

Գ. ԱՊԱՋԱ ՓԱՇԱՅ ԱՐՇԱԻԷ Ի ԼԵՀՍ

Եւ մինչ նոքա անդ էին՝ Ապաղան կարծեց  
 թէ մարդ չկայ Լէհ, ամէնն զնաց ի Մօսքով-  
 զօրաժողով արարեալ ժանտն դայր վաթսուն  
 հազարաւ ի վերայ Լէհու. եւ Խան Դէմիրն ԻՌ  
 թաթարաւ ընդ նմա. այլ եւ գրեաց առ սօլթան 5  
 Մուրատն թէ Ահա օր, ահա ժամանակ. ե՛լ եւ  
 դու ուշիկ ուշիկ եւ եկ զինի իմ, զի ոչ ոք կայ.  
 Ինքնին բացվին դուռնք քաղաքաց մեզ : Որ եւ  
 նա ելեալ էտրնայ եւ անդ նստաւ : Իսկ Ապա-  
 ղան կամուրջ կապեալ դարձեալ ի վերայ Թու- 10

9 կարնա :

<sup>1</sup> Վրան մանրագիր տէմիայ :